կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ԿԱՄԱՎՈՐ 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Երևան-2013

Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին

Հազար ՀՀ դրամ		30 հունիս 2013	31 դեկտեմբեր 2012
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		223	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» չգրավադրված ֆինանսական ակտիվներ	7	937	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» գրավադրված ֆինանսական ակտիվներ	7	-	-
Ընդամենը ակտիվներ		**1,160**	**-**
Պարտավորություններ			
Այլ կրեդիտորական պարտքեր		2	-
Ընդամենը պարտավորություններ (բացառությամբ մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվների)		2	-
Փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվներ	8	**1,158**	**-**

Հայկ Ոսկանյան
Ֆոնդի կառավարչի
գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

18 հուլիս 2013

		Հունիսի 30-ին ավարտված եռամսյակի համար	
Հազար ՀՀ դրամ		**30.04.2013-30.06.2013**	**30.04.2012-30.06.2012**
Տոկոսային եկամուտ	5	8	-
Զուտ օգուտ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքներից	6	23	-
Ընդամենը եկամուտ		31	-
Ներդրումային կառավարման վճարներ		(2)	-
Պահառուի վճարներ		(-)	-
Տոկոսային ծախսեր		-	-
Ընդամենը գործառնական ծախսեր		**(2)**	-
Գործառնական շահույթ		**29**	-
Մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվների աճ		**29**	**-**

Հայկ Ոսկանյան
Ֆոնդի կառավարչի
գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

18 հուլիս 2013

Հաշվետվություն մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին

		Հունիսի 30-ին ավարտված եռամսյակի համար	
Հազար ՀՀ դրամ		**30 հունիս 2013**	**31 դեկտեմբեր 2012**
Մնացորդը առ 1 հունվարի	8	-	-
Մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվների աճ		29	-
Մարելի փայերի տերերի կողմից կատարված ներդրումներ և մարումներ՝			
Փայերի թողարկումներ ժամանակաշրջանի ընթացքում		1,129	-
Փայերի հետգնում ժամանակաշրջանի ընթացքում		(-)	-
Ընդամենը մարելի փայերի տերերի կողմից կատարված զուտ ներդրումներ և մարումներ		**1,129**	-
Մնացորդը առ 30 հունիսի	8	**1,158**	-

Հայկ Ոսկանյան
Ֆոնդի կառավարչի
գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

18 հուլիս 2013

		Հունիսի 30-ին ավարտված եռամսյակի համար	
Հազար ՀՀ դրամ		**30 հունիս 2013**	**30 հունիս 2012**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		-	-
Վճարված տոկոսներ		-	-
Ներդրումների վաճառքից մուտքեր		-	-
Ներդրումների գնում		(906)	-
Վճարված գործառնական ծախսեր		-	-
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**(906)**	-
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Մարելի փայերի թողարկումից մուտքեր	8	1,129	-
Մարելի փայերի հետգնումից ելքեր	8	-	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**1,129**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)		223	-
Դրամական միոցներ և դրանց համարժեքներ առ 30 ապրիլի		-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 30 հունիսի		223	-

Հայկ Ոսկանյան
Ֆոնդի կառավարչի
գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

18 հուլիս 2013

Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին 2
Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքի մասին 3
Հաշվետվություն մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին .. 4
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին 5
1. Հաշվետու ֆոնդ 7
2. Պատրաստման հիմունքներ 7
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն . 8
4. Ֆինանսական ռիսկերի կառավարում 12
5. Տոկոսային եկամուտ 16
6. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 16
7. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ 16
8. Մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվներ 16

1. Հաշվետու ֆոնդ

«ԿԱՄավոր 1» կենսաթոշակային ֆոնդի կանոնները (այսուհետ՝ Ֆոնդ) գրանցվել է 2013թ. ապրիլի 30-ին ՀՀ ԿԲ խորհրդի 123Ա որոշմամբ:

Ֆոնդի կառավարումն իրականացվում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից, որը ստեղծվել է 2012թ. հոկտեմբերի 18-ին, և գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել թիվ 1 լիցենզիան:

2. Պատրաստման հիմունքներ

ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) համապատասխան:

բ) Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման իրական արժեքի հիմունքով, բացառությամբ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով չվերաչափվող ֆինանսական պարտավորությունների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ֆոնդի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

դ) Հարկում

Հայաստանի Հանրապետությունում կենսաթաշակային ֆոնդերը շահութահարկ վճարող չեն հանդիսանում:

ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար կառավարիչը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների, որոնք ունեն էական ռիսկ, վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 3-ում և 4-ում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ֆոնդը արտարժույթով գործարքներ չի իրականացրել: Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես զուտ կորուստ արտարժույթի փոխարժեքային զուտ օգուտ (կորուստ) փոխարկումից, բացառությամբ այն շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող օգուտում:

բ) Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը, ներառյալ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆոնդը արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

գ) Զուտ օգուտ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքներից

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը ներառում է բոլոր իրացված և չիրացված իրական արժեքների փոփոխությունները և արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, բացառությամբ տոկոսային և շահաբաժնային եկամտի:

դ) Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, որպես ծառայությունների կատարում:

ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

I. Ճանաչումը և սկզբնական չափումը

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են գործարքի օրվա ամսաթվին, որն այն ամսաթիվն է, երբ Ֆոնդը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում են այն ամսաթվին, երբ դրանք տեղի են ունենում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ գործարքի հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

II. Դասակարգում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ են, կամ
- սկզբնական ճանաչման պահին Ֆոնդի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ

Ֆոնդը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»՝ ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը Կառավարիչը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները, ինչպես նաև որպես «իրական արժեքով՝

շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ» նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Ֆոնդը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

III. Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ֆոնդը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

IV. Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

V. Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

VI. Ապաճանաչում

Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ֆոնդը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ֆոնդի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Ֆոնդը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Գործարքներում, որոնցում Ֆոնդը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը: Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Ֆոնդը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ֆոնդը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆոնդը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

VII. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ ըստ կիրառելիության: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ կամ հաճախորդներին տրված վարկեր հոդվածներում՝ ըստ կիրառելիության: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

VIII. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են տոկոսադրույքների, արտարժույթների, թանկարժեք մետաղների շուկաների և բորսաների սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները և օպցիոնները, ինչպես նաև նշված գործիքների ցանկացած համակցությունը: Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ կնքվում է ածանցյալ գործիքի պայմանագիրը: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություններ՝ բացասական իրական արժեքի դեպքում: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

IX. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

4. Ֆինանսական ռիսկերի կառավարում

ա) Ներածություն և նկարագրություն

Ֆոնդը ենթարկված է հետևյալ ռիսկերին `

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Գործառնական ռիսկ

Այս ծանոթագրությունը ներկայացնում է տեղեկություն վերոնշյալ ռիսկերին Ֆոնդի ենթարկվածության վերաբերյալ, Ֆոնդի նպատակները, քաղաքականությունները, ռիսկի չափման և կառավարման գործընթացները:

Ռիսկի կառավարման կառուցվածք

Ֆոնդը պահպանում է ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների տարբեր դիրքեր համաձայն իր ներդրումային կառավարման ռազմավարության: Ֆոնդի ներդրումային պորտֆելը ամբողջությամբ բաղկացած է պարտքային պետական արժեթղթերից: Ֆոնդի ներդրումային պորտֆելի սահմանափակումները կարգավորված են նաև ՀՀ ԿԲ խորհրդի 06 դեկտեմբեր 2011թ. թիվ 337-Ն որոշմամբ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի կողմը չի կատարի պարտականությունը՝ Ֆոնդի համար հանգեցնելով ֆինանսական կորստի: Այն ավելանում է հիմնականում պահվող պարտքային

արժեթղթերից, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական ակտիվներից, դրամական միջոցներ և դրանց համարժեքներից և հակադարձ ռեպո համաձայնագրերի ներքո դեբիտորական պարտքերից: Ռիսկի կառավարման գծով հաշվետվությունների պատրաստման նպատակների համար Ֆոնդը հաշվի է առնում և համախմբում պարտքային ռիսկին ենթարկվածության բոլոր բաղադրիչները (ինչպիսիք են անհատ փոխառուի անվճարունակության ռիսկը, երկրի և ոլորտի ռիսկը):

Պարտքային ռիսկի կառավարում

Պարտքային ռիսկը վերահսկվում է ներդրումային կառավարիչի կողմից բավարար պարբերականությամբ բոլոր հնարավոր ռիսկերը կառավարելու համար: Ֆոնդը գործընկերներին ընտրելիս իրականացնում է մոնիտորինգ, ինչպես նաև ապահովում է ակտիվների դիվերսիֆիկացում ըստ տարբեր գործընկերների:

Պարտքային ռիսկին ենթարկվածությունը ներկայացված է ստորև աղյուսակում

Հազար ՀՀ դրամ, 30 հունիս 2013	Դրամական միջոցներ	Պարտքային արժեթղթեր	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ ՀՀ բանկերում	223	-	**223**
ՀՀ պետական արժեթղթեր	-	937	**937**
	223	**937**	**1,160**

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդը ածանցյալ ֆինանսական գործիքներ չի ունեցել:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆոնդի դրամական միջոցները և դրանց համարժեքները գտնվում են միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, որը վարկանշված է Fitch Ratings վարկանշող գործակալության BB վարկանիշով՝ կանխատեսումը կայուն:

Ներդրումային կառավարիչը մոնիտորինգի է ենթարկում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը եռամսյակային կտրվածքով և ըստ անհրաժեշտության:

Դեբիտորական պարտքեր հակադարձ հետգնման համաձայնագրերի գծով

Եթե Ֆոնդը դառնում է հակադարձ հետգնման համաձայնագրերի կողմ, ապա դա կարող է պարտքային կորստի հանգեցնել այն իրադարձությունից, երբ գործարքի մյուս կողմը անկարող լինի կատարել իր պայմանագրային պարտականությունները Ֆոնդի նկատմամբ և գրավի արժեքը նվազում է արագորեն և բավարար չէ ծածկելու վճարվող գումարը: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդը հակադարձ հետգնման համաձայնագրերի գծով ստացվելիք գումարներ չունի:

Ժամկետանց և արժեզրկված ակտիվներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ մի ֆինանսական ակտիվ ժամկետանց կամ արժեզրկված չի եղել:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ֆոնդը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիությունը կառավարելու տեսանկյունից Ֆոնդի քաղաքականությունը և ներդրումային կառավարչի մոտեցումն է՝ ապահովել, որքան հնարավոր է, որ այն մշտապես ունենա բավարար իրացվելի միջոցներ՝ իր պարտավորությունները ժամանակին մարելու համար՝ ինչպես սովորական, այնպես էլ լարված պայմաններում, ներառյալ փայերի գնահատված մարումները, այնպես, որ Ֆոնդն անհարկի վնասներ չկրի և նրա հեղինակությունը ռիսկի չենթարկվի:

Իր կանոնների համաձայն՝ Ֆոնդը պարտավոր է մարել փայերը (այն փայերը որոնց ձեռքբերումից անցել է երկու տարի)՝ համապատասխան հայտ ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Ուստի ֆոնդն իրացվելիությունը կառավարելիս հաշվի է առնում փայերի մարման արդեն իսկ ստացված և սպասվող հայտերը, եթե այդպիսիք լինեն:

դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը այն ռիսկն է, որ շուկայական գների, ինչպիսիք են տոկոսադրույքները, փայերի գները, արտարժույթի փոխարժեքները, փոփոխությունները, ազդեցություն կունենա Ֆոնդի եկամտի կամ պահվող ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել ու վերահսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունն այնպես, որ այն մնա ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով եկամտաբերությունը:

Շուկայական ռիսկի կառավարում

Ֆոնդի շուկայական ռիսկի կառավարման ռազմավարությունը պայմանավորված է Ֆոնդի ներդրումային նպատակով: Ֆոնդի շուկայական ռիսկը կառավարվում է Ֆոնդի կառավարչի կողմից օրական հիմունքով՝ սահմանված քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան:

Տոկոսադրույքի ռիսկ

Ֆոնդի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին պայմանավորված է ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանումներով՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար կառավարիչը ներդրումներն իրականացնում է այնպիսի ժամկետային կառուցվածքով, որն առավելագույնս համապատասխանի ֆոնդի փայերի դասերի կառուցվածքին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել, եթե շուկայում համատարած տեղի ունենան տոկոսադրույքի մակարդակների տատանումներ:

Արժութային ռիսկ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդը արժույթային ռիսկին ենթարկված չէ, քանի որ չունի ոչ մի արտաարժութային ակտիվներ և պարտավորություններ:

ե) Գործառնական ռիսկ

Ֆոնդի կառավարչի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները և իր հեղունակությանը հասցվող վնասը:

Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ֆոնդի կառավարիչը, որի կառավարման համար նա առաջնորդվում է ընդհանուր ստանդարտներով, ինչը ներառում է վերահսկողություն բիզնես գործընթացների նկատմամբ:

5. Տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	30.04.13-30.06.2013	30.04.12-30.06.2012
Տոկոսային եկամուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		
Պարտքային պետական արժեթղթեր	8	-
	8	**-**

6. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Հազար ՀՀ դրամ	30.04.13-30.06.2013	30.04.12-30.06.2012
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		
Պարտքային պետական արժեթղթեր	23	-
	23	-

7. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	**30.06.2013**	**31.12.2012**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գրավադրված ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ ֆինանսական ակտիվներ.	-	-
Պարտքային պետական արժեթղթեր	-	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չգրավադրված ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ ֆինանսական ակտիվներ.		
Պարտքային պետական արժեթղթեր	937	-
	937	-
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ.	-	-
Վարկեր	-	-
	-	-

8. Մարելի փայերի տերերին վերագրելի զուտ ակտիվներ

Փայերի թվաքանակում առկա շարժերի վերլուծությունները և փայերի տերերին վերագրվող զուտ ակտիվները եռամսյակի ընթացքում ներկայացված են ստորև՝

Փայերի քանակ (հատ)	2013 Ընդամենը
Մնացորդը առ 30 ապրիլի	-
Եռամսյակի ընթացքում փայերի թողարկում	1,129
Եռամսյակի ընթացքում փայերի ետգնում	(-)
Մնացորդը առ 30 հունիսի	**1,129**

	Ընդամենը
Մնացորդը առ 30 ապրիլի	
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	29
Եռամսյակի ընթացքում մարելի փայերի թողարկում	1,129
Եռամսյակի ընթացքում մարելի փայերի ետգնում	(-)
Մնացորդը առ 30 հունիսի	**1,158**
Զուտ ակտիվների արժեքը յուրաքանչյուր փայի գծով (ՀՀ դրամ)	**1,026**

Մարելի փայերի տերերը իրավունք ունեն յուրաքանչյուր աշխատանքային օր հայտ ներկայացնել իրենց պատկանող այն փայերի մարման, որոնց ձեռքբերումից անցել է երկու տարի, իսկ ֆոնդը պարտավորվում է 3 օրվա ընթացքում բավարարել այն:

Հայկ Ոսկանյան
Ֆոնդի կառավարչի
գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ

18 հուլիս 2013